Կարծիք

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Գոռ Էդվարդի Պետրոսյանի «Պատժամիջոցների դերը գլոբալ և տարածաշրջանային քաղաքական գործընթացներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Պաշտպանության ներկայացվող ատենախոսության թեման խիստ արդիական է, եթե չասենք միջազգային հարաբերություններում հետարդիական ձևափոխումների շուրջ: Պատժամիջոցները, ինչպես իրավացիորեն նկատում է ատենախոսության հեղինակը, հետսառըպատրեզամյան և հատկապես վերջին տասնամյակում միջազգային հարաբերություններում կոնֆլիկտի արտահայտման ու պատժի կիրառման ամենատարածված միջոցն են դարձել, այն պայմաններում, երբ միջպետական ռազմական բախումների հաճախականությունը հասել է պատմական մինիմումի Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ու թեև նկատվում է այդ միտումի վերադարձը դեպի պատմականորեն ավելի օրթոդոքս միջպետական պատերազմների շրջան, պատժամիջոցների ուսումնասիրությունը ոչ միայն մնում է արդիական, այլ ձեռք է բերում էլ ավելի պահանջված որակ, քանի որ այդ թվում դրանց անարդյունավետ, ոչ խելամիտ կամ ոչ վճռական կիրառումն է, որ հանգեցրել է դրանց փոխարեն ռազմական ուժի գերադասմանը միջազգային սուբյեկտների կողմից: Դրա ականատեսն ենք ինչպես Արցախյան երկրորդ պատերազմից առաջ և հետո, այնպես էլ Ուկրաինայում պատերազմից առաջ ու հետո, և դրա ճգնաժամին ենք հետևում Հայաստանի հարավային հարևանի շուրջ միջազգային զարգացումներում:

Սրա լույսի ներքո, կարևորվում է հեղինակի նպատակն ու հաջող փորձը համակարգել պատժամիջոցների՝ որպես հայեցակարգի տեսական հնարավորություններն ու սահմափակումները, ինչպես նաև ուրվագծել մեր շուրջ ձևավորված սանկցիոն կծիկի ազդեցության մեխանիզմները Հայաստանի շահերի համատեքստում: Դժվար է չհամաձայնվել հեղինակի այն մտքի հետ, որ «աշխարհաքաղաքական գործոններով պայմանավորված՝ Հայաստանն իր անկախության ողջ շրջանում կրել է և շարունակում է կրել պատժամիջոցների ուղղակի և անուղղակի ազդեցությունը» (էջ 108):

Գալով աշխատանքի տեսական որակներին, չենք կարող չառանձնացնել և չողջունել հեղինակի նյունսավորված մոտեցումը պատժամիջոցների արդյունավետության գնահատման հարցում: Հրաժարվելով դուալիստական ընտրությունից, հեղինակն իր առաջարկած սահմանման մեջ ներմուծում է դրանց

հաջողությունը չափող երեք հարթություն՝ պատժամիջոցներին ենթարկվողի քաղաքականության փոփոխությունը, նրա կարողությունների սահմանափակումը կամ նրա պատժումը: Այս փորձը առանձնացնում է աշխատանքը թեմայի շուրջ առկա գրականության մեջ և վերլուծական պոտենցիալ ունեցող մշակում ավելացնում թեմայի գիտական մշակումներին:

Աշխատանքում սահմանվել են գիտական մեթոդներին ենթարկվող և իրագործելի նպատակներ և խնդիրներ, որոնք հետևողականորեն հասցեագրվում են ատենախոսության մեջ: Գովելի է նաև այն, որ աշխատանքի կառուցվածքը տրամաբանորեն կապված է սահմանված խնդիրներին՝ թույլ տալով անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրին համամասնական ուշադրությամբ: Ուսումնասիրության արդյունքներն ամբողջությամբ արտացոլված են եզրակացություններում: Դրանք շատ հստակ են, համակարգված և բխում են ուսումնասիրության արդյունքներից: Վստահ ենք, որ ուսումնասիրության արդյունքները կարող են ունենալ գործնական ու կրթական նշանակություն, ինչի մասին իրավացիորեն նշում է հեղինակը:

Կատարված հետազոտությունը փաստում է ասպիրանտի կողմից ժամանակակից քաղաքագիտական մեթոդների հմուտ տիրապետումը, ինչպես նաև հիմք տալիս տեսամեթոդական կիրառված մոդելը դուրս բերել և օգտագործել հետազոտական այլ օբյեկտների պարագայում: Օգտագործված գրականությունն ու աղբյուրները համապատասխանում են գիտական բարձր չափանիշներին, ինչպես նաև արհեստավարժորեն հաշվի են առնում գրեթե անխուսափելիորեն քաղաքական կողմնորոշում ունեցող հեղինակների ներդրումները՝ ներկայացնելով դրանց շարժառիթներն ու շահերը և հավասարակշռելով դրանք գրականության տեսության համակողմանի ուսումնասիրությամբ:

Աշխատությունն աչքի է ընկնում նաև իր համակարգվածությամբ, հստակ շարադրմամբ, գիտական ոճով ու տպավորիչ գրականության ցանկով: Այն ունի հստակ կառուցվածք, տեխնիկական ու գիտական ձևավորված ապարատ: Աշխատության յուրաքանչյուր բաժին հստակեցնում է տվյալ հատվածի նպատակ-խնդիրները, ապա, հետազոտական արդյունքների քննարկումից հետո, հետևողականորեն ամփոփում դրանք:

Աշխատությունը քննադատական մոտեցմամբ դիտարկելիս, առանձնացրել ենք հետևյալ հիմնական նկատառումները.

1. Խնդիր 1-ի շրջանակում հեղինակը սահմանում է հետևյալ խնդիրը՝ «տարանջատել պատժամիջոցների կիրառման քաղաքական նպատակները», ինչպես նաև աշխատության մեջ տարանջատումներ կատարում տնտեսական և այլ նպատակների միջև: Թեև իրավացիորեն, հեղինակը էջ 18-ում արդեն պարզաբանում է, որ պատժամիջոցների լեյտմոտիվները քաղաքական են, ինչը արդեն փարատում է ընթերցողի մոտ ավելի վաղ առաջ եկող տարակուսանքը առ այն, թե արդյոք պետությունների բոլոր նպատակների

հանրագումարը ի վերջո քաղաքական չեն, սակայն աշխատությունը միանշանակ կշահեր դրանց հստակեցումից: Այստեղ, կարծում ենք, առավել նպատակահարմար կլիներ նույնացնել պատժամիջոցների նպատակը այն տեղին ձևակերպման հետ, որն հեղինակը ընտրել է պատժամիջոցների իր սահմանման մեջ, ապա դրանց կիրառման միջոցների շարքում ներառել նաև քաղաքականը՝ հստակ հայեցակարգային տարանջատում մտցնելով քաղաքական նպատակի և միջոցի միջև:

2. Հաջորդ դիտարկումը նույնպես հեղինակի հայեցակարգային ընտրությունների մասին է, մասնավորապես՝ «սև ասպետ» եզրույթի ֆունկցիոնալ և կառուցվածքային կիրառումների: Հեղինակը մի քանի անգամ դիմում է հայեցակարգի օգտագործմանը, սակայն չտալով դրա իր ընթերցումը կամ մեկ այլ հեղինակի սահմանումը, մեկնաբանման ազատություն է թողնում ընթերցողին, որը հնարավոր է շեղվի այն պատկերացումից, որը մտադրվել է փոխանցել հեղինակը: Աշխատանքը կշահեր նման հղումից կամ սահմանումից:
3. Անհրաժեշտություն ենք տեսնում հեղինակի կողմից պարզաբանելու դիվանագիտական պատժամիջոցների կատեգորիան, քանի որ դիվանագիտական միջոցները դեռևս այն եղանակն են, որոնց սպառումից հետո նոր դիմում է կատարվում ավելի կոնֆլիկտայիններին՝ պատժամիջոցներին: Իսկ եթե դրանք համարում ենք պատժամիջոց այն տրամաբանությամբ, որ դիվանագիտական այդ եղանակները սահմանափակումների միջոցով ազդում են մեկ այլ սուբյեկտի վարքի փոփոխության վրա, ապա վտանգ կա հայեցակարգի գերընդլայնման ճանապարհով կորցնելու դրա վերլուծական արժեքը:
4. Քանի որ ՌԴ-ի դեմ կիրառված պատժամիջոցները իրենց հիմնական ազդեցությունը ունենալու են ինչպես երկրի զարգմացման, այնպես էլ պատերազմական գործողությունների երկարաժամկետ հեռանկարներում, աշխատանքը կշահեր, եթե ավելի խորը անդրադարձ կամ հղում կատարվեր նման կանխատեսումներին, ի հակադրություն դրանց կարճաժամկետ ազդեցություններին, որոնք Ռուսաստանի Դաշնությունը դիմակայել է հարաբերական հաջողությամբ: Վերջիններիս հեղինակը անդրադառնում է ամենայն մանրամասնությամբ, ինչը դրական է՝ հաշվի առնելով դրանց թարմությունը և ուսումնասիրման ժամանակի սղությունը:
5. Թեև աշխատանքի շարադրման և լեզվական բարձր որակին, առկա են խմբագրական մի քանի վրիպակներ էջեր 26, 43, 113, 150-ում:

Ամփոփելով վերոշարադրյալը, գալիս ենք այն ամբողջացնող եզրակացությանը, որ նշված դիտարկումները կրում են առաջարկի բնույթ և շահագրգռված լինելով լավարկել հեղինակի կատարած արժեքավոր և պրոֆեսիոնալ կատարված

ուսումնասիրությունը: Դրանք ոչ մի կերպ չեն նսեմացնում այն լայնածավալ ու թե՛ կիրառական, թե՛ տեսական տեսանկյունից կարևոր աշխատանքը, որը կատարվել է, և որը լրացնում է թեմայի շուրջ առկա հսկա բացը Հայաստանի գիտական միջավայրում: Հեղինակը լիովին կատարել է իր առջև դրված նպատակն ու խնդիրները՝ տալով բարձրորակ գիտական արտադրանք:

Հաշվի առնելով վերոնշված փաստերը, կարծում ենք, որ ներկայացվող աշխատանքը լիովին համապատասխանում է գիտական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Գրախոսեց՝ Նարեկ Սուքիասյան

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի, Մշակույթի և քաղաքակրթական
հետազոտությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
ք.գ.թ.
14.02.2023թ.

Ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ. Մ. Հովհաննիսյան
«15» փետրվարի 2023